

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ֆր.

Վեցամսեայ 6 ֆր.

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիւր միկ ծրարով

Տարեկան . . . 14 ֆր.

Վեցամսեայ . . . 7 ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Մանուցման սուղը
20 ամսիս



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Կ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՑԵ

Rédaction du journal

„Iraounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

Иравункъ

ВАРНА

Գրութիւնք եւ լին
տրոշիր

ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ ԱՆԳԼԻԱ

Մակեդոնիոյ միջազգային դոն-
թրօլը Սուլթանին ընդունել տա-
լու համար, պետութեանց նաւա-
յին ցոյցին յաջորդ օրը եգիպ-
տոսի մէջ երեւան եկած հակա-
քրիստոնէական շարժումը սպառ-
նալիք մը կը նկատուի քրիս-
տոնեայ աշխարհին դէմ իսլա-
մութեան կողմէ. մասնաւորա-
պէս այդ սպառնալիքը ուղղուած
ըլլալ կը կարծուի Անգլիոյ դէմ,
որ իր գաղութալորներուն մէջ
Սուլթանէն հնգապատիկ աւել-
ի թուով իսլամ հպատակներ
ունենալով հանգերձ չը վարա-
նեցաւ այս անգամ ալ Մակե-
դոնական խնդրոյն մէջ միւս
պետութիւններէն աւելի ծան-
րանալ խաղիքային վրայ:

Խնդիր է գիտնալ թէ խաղի-
քային այդ սպառնալիքէն Անգ-
լիա լրջօրէն կը վախնա՞յ:

Մենք կը կարծենք թէ Անգ-
լիա իրապէս այդ վախը չունի:
Եթէ երբեմն իսլամ հպատակնե-
րը չը յուզուէ խօսքեր ըրած
են անգլիացի նախարարներ ա-
նոնք իբր պատրուակ գործա-
ծած են այդ, իրենց քաղաքական
ներքին հաշիւները սքօղելու հա-
մար: Եթէ այսպէս չըլլար, Անգ-
լիան եգիպտոսի նման զուտ իս-
լամական երկիր մը ձեւով մը գը-
րաւելէն յետոյ, Հայկական, Կրէ-
տական եւ Մակեդոնական խըն-
դիրներուն մէջ ինք ամենէ խիստ
գիրքը չպիտի բռնէր խաղիքա-
յին դէմ: Մէկու մը ուժէն կամ
ազդեցութենէն վախնալով հան-
դերձ անոր վրայ յարձակիլը
յիմարութիւն պիտի ըլլար:
Բայց Անգլիոյ պետական վարիչ-
ները յիմարներ չեն, այլ ընդ-
հակառակը աշխարհին էն խորա-
մանկ գիւնազէտներն են ա-
նոնք:

Նոյնպէս Անգլիացուց համար
տառնեակ մը տարիներէ ի վեր
գաղտնիք մը չէ որ եւրոպայ հա-
միսլամական ծրագիր մը գծած
է եւ կը ջանայ իսլամ աշխար-

հի սիրտը իրեն կապեր օսման-
եան վեհապետը տիեզերական
խաղիքա ճանչցնելու համար:
Սուլթանական այս ծրագրին ա-
նիրականալի երազ մը լինելուն
անգլիացիք արդէն համոզուած
են: Սկիզբէն ի վեր շատ իսլամ
վեհապետներ միաժամանակ ինք-
զինքնին խաղիքա, մարգարէի
փոխանորդ, հուշակած են. այ-
սօր ալ նոյն հաւակնութիւնը ու-
նին ինչպէս Թուրքերու Սուլ-
թանը, նոյնպէս ալ Պարսից
շահը, Մարոքի էմիրը, Արաբ եւ
այլ ցեղապետներ. որոնց ամե-
նըն ալ իրենց հպատակներուն
կամ ցեղակիցներուն վրայ գեր-
նական ազդեցութիւն մը ունե-
նալու համար այդ կրօնապետա-
կան հանգամանքներով պճնա-
զարգուելու մեծ հոգ կը տա-
նին ու բնաւ տրամադիր չեն
նշանախեց մը անկէ զոհելու ի
նպատակ Պոլսոյ Սուլթանին: Նոյն
իսկ իր հպատակներու մէկ մեծ
մասը այսօր կը մերժէ Սուլթա-
նին խաղիքայութիւնը. եւ այս
իրողութիւն մըն է, որուն ապա-
ցոյցն է տրաքական նոր մեծ ա-
պստամբութիւնը, որուն վարի-
չըն ալ իրեններէն Խալիֆա հը-
շակուած է արդէն: Եւ մենք կը
հաւատանք թէ Սուլթանը շատ
աւելի կը վախնայ Անգլիոյ էն-
թրիքներէն, որ կրնայ քիչ ժա-
մանակի մէջ Սուլթանի բոլոր
արարախօս հպատակները, Արա-
բիան, Միջագետքը եւ Ատրիքը
ոտքի հանել իր պաշտպանու-
թեանը տակ արաքացի խաղի-
քայի մը հրաւերովը. ասոր մէկ
նմոյշը տեսնուեցաւ նոյն իսկ
այս տարի:

Սխալ կը նկատենք ումնց այն
կարծիքը թէ հայկական խնդ-
րոյն, կամ Հայաստանի բարե-
նորոգմանց համար, Անգլիա պի-
տի զգուշանայ կրկին Սուլթա-
նին վրայ ծանրանալ, վախնա-
լով թէ սա կրնայ Հնդկաս-
տանի իսլամները իր դէմ ըմ-
բոստացնել: Պէտք է գիտնալ թէ
Անգլիա իր ասիական երկիրնե-
րուն, մանաւանդ Հնդկաստանի

մէջ այսօր է՛ն ապահով դիրքը
ունի ինչ որ չէր ունեցած մին-
չեւ ցարդ. անգլո-ճարօնական
նոր պաշնագրութիւնը եւ մրցա-
կից Ռուսիոյ ջախջախեալ կա-
յալթիւնը կրկնակ երաշխաւո-
րութիւններ են Անգլիոյ ասիա-
կան տիրապետութեան ապահո-
վութեան հզօրացումին:

Հետեւաբար կը կարծենք թէ
Անգլիա երբեք կարենալութիւն
չպիտի տայ համիսլամական խը-
լրտումներուն երբ ուրիշ քաղա-
քական հանգամանքներ իրեն
թոյլատրեն գործնական քայ-
լեր առնել ի նպաստ Հայոց:

ՆԱՍԱԿ ՏՓՂԻՍԸ

(Թանի մասնաւոր թղթակցէն)

ԱՆԻՇԵԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

Տփղիս 19 դեկտեմ.

Եղիսապէթպօլի (Դանձակ) եւ Տըփ-
ղիսի վերջին ղէպքերը եթէ չեն դե-
րազանցել սարսափի տեսակէտով
Շուշիի եւ Պաքոյի նախորդ կոտո-
րածները, գէթ անոնք ցոյց կուտան
ոռւս բարձր իշխանութիւնը տկար
վիճակի մը եւ վարչութիւնը անիշ-
խառնութեան մը մէջ որ ասկէ առաջ
տակաւին ապացուցուած չէր: Դուք
ալ այդ մասին ձեր գատողութիւնը
ըրէք այն ղէպքերուն վրայ որոնց
վկանները մենք եղանք:

Ուրբաթ առաւօտ դեկտ. 1ին,
բազմաթիւ թաթարներ որ գիշերո-
ւան մութէն օգտուելով Եղիսա-
պէթպօլի մօտեցած էին, անսպասե-
լիօրէն պաշարեցին քաղաքը, եւ կըց-
ուելով իրենց կրօնակիցներուն, ո-
րոնք քաղաքին բնակչութեան մե-
ծագոյն մասը կը կազմեն, սկսեցին
հայերը կոտորել: Սնունք կայարանը
պաշարեցին որպէսզի փախչողներուն
փախուստը արգիլեն. յայնմամ պա-
հակազօրի մէկ մ օր նաեւ կա-
մաւորներէն գրաւուեցաւ կայարանը,
որպէսզի չը թաղանուի եւ կառա-
խութիւնը երթեկիւթիւնը չընդ-
հատուի:

Թղթատանց եւ հեռագրատանց
պաշտօնէից գործադրելին պատճա-
ռաւ, այս լուրերը միայն հետեւեալ
օրը Տփղիս հասան, Սնմիջապէս զօ-
րավար Մամադ երկու ջոկատ տը-
րակոններով մեկնեցաւ, Գանի մը օր

յետոյ կարգը վերահաստատուեցաւ.
կը հաշուուի 80 հոգի մեռեալ, 200
վաճառատուն կողոպտուած եւ 60
տուներ այրած:

Այս նշանակելի ղէպքերուն հան-
դէպ, կը թուէր թէ կառավարութիւ-
նը պարտաւորուած էր միջոցներ ձեռք
առնելու Տփղիսի մէջ արգիլելու
համար հայոց կողմէ հաւանական
վրէժխնդրութիւններ: Բայց կոմս
Վարանցով Տաշքով, մաշած ու տկար
բնաւորութեամբ մարդ մը, որ բնաւ
պատրաստուած չէր կովկասի փոխ-
արքայութեան խիստ փափուկ եւ
զօռուարին պաշտօնին, չկրցաւ կամ
չուզեց ձեռք առնել ոչ մէկ կան-
խարգել միջոց: Զանազան կուսակ-
ցութեանց միջեւ տատանող փո-
խարքան, ձեռքին տակ բանակ մը
չունենալով այն օրէն ի վեր յորում
Տփղիսի պահակ զօրքերը բազմաթիւ
միթիւններու սկսած էին յետադի-
մական կուսակցութեան ազդեցու-
թեան տակ՝ որ կը յուսայ հակա-
ռակ ամէն յոյսի մէջ պիտի կրնայ
պահպանուիլ ընդհանուր անկարգու-
թեանց շնորհիւ, բոլորովին տրամա-
դրուած ըլլալու էր ի հարկին թա-
թարները գործածել Հայոց դէմ, զորս
ինք, փոխարքան, կամաւորապէս պա-
տասխանատու կովկասը ճնշող բոլոր
չարիքներուն, ինչպէս սր նոյնմ. 4 ին
տիւր օրուան մէջ նա գործածած
էր ոռւս հայրենասէրները ընդդէմ
դպրոցականներու եւ մտաւորականնե-
րու, ամբաստանուած սօսիալ-դէմո-
կրատներու համակիր ըլլալու մէջ:
Դէպքերը չուշացան, ամեն պարագա-
յի մէջ, անոր առիթ ընծայելու
ցոյց տալու համար թէ ինք աւելի
որոնց նախապատմութիւն կու-
տար:

Դեկտ. 5ի երեքշաբթի օրը, իրիկ-
ուան ժամը 8ի տօնները հրացանի
ձայներ լսուեցան Մէլտան հրապա-
րակի կողմէն որ թաթարական
չուկան հայկականէն կը բաժնէ: Եր-
կու ցեղերուն միջեւ զինեալ կոն-
ւըն էր որ կսկիւէր Տփղիսի մէջ:
Հետեւեալ օրը իմացուեցաւ թէ
տասնեակ մը թաթարներ եւ քանի
մը հայեր սպաննուեցան. գալով թէ
ինչ կերպով սկսած է կոնւը, պատ-
մուածները բնականապէս հակասա-
կան էին, թաթարները տարբեր կը-
սէին, հայերը տարբեր: Շատ զրժ-
ուար պիտի ըլլայ, եթէ ոչ անկա-
րելի, պատասխանատուութիւնները
որոշ եղանակով մը հաստատել,
բայց ընդհանրապէս կընդունուի թէ
հայերն էին որ թաթարները գրգռե-
ցին. այս մեկնութիւնը նախնապէս
խելքի մօտ կը թուի այն իրողու-

թեան համար թէ Հայերը Տփղիսի մէջ տասնապատիկ բազմաթիւ են թաթարներէն եւ թէ այս վերջինները բաւական խաղաղ առեւտրականներ մինչեւ այսօր վէճ չեն ունեցած առաջիններուն հետ :

Ամսոյն 6 ի չորեքշաբթի օրը մը տահազութեամբ անցաւ : Առաստուղն իւրաքանչիւր հիւպատոսարանի տրբամադրութեան տակ չորսական հոգինոց պահակախումբ դրուեցաւ : Կէսօրէն յետոյ, սօսիալ-դէմօկրատ կուսակցութեան պատկանող զորմաւորները որոշեցին զորքը ձգելու եւ մեծ թուով երթալ շուկան, երկու կողմերու մէջ խաղաղութիւն հաստատել փորձելու համար : Վայրկեան մը կործնեցին թէ յաջողեցան եւ հրացանաձգութիւնը չորս մամ դադարեցաւ, բայց զիչերը աւելի խիստ սկսաւ. անկարելի էր համոզումով արդիւնքի մը հասնիլ :

Այն ատեն սօսիալ-տէմօկրատները խնդրեցին փոխարքայէն որ զիրենք զինէ եւ արտօնէ թաթարները Հայերէն զատելու համար : Կոմս Վարանցով Տաշքով անոնց խնդրանքը ընդունելով, անմիջապէս հրաման ըրաւ զինարանին 500 հրացան տալու անոնց : Անոնք զինուած գացին կրոււոյ թատերապարը եւ սկսան կրակ ընել ամէն անոնց դէմ որոնք զէնք կարձակէին. որոնց որ շուկան կենալը հարկ չէր քաղաք տարուեցան պահակութիւն եւ ոստիկանութիւն ընելու համար : Այս բաները տեղի կունենային դեկտ. 8 ին :

Միեւնոյն ժամանակ կը կազմակերպուէին շատ մը ուրիշ պահակախումբեր, զինուած այլեւայլ զօմթիւններէ : «Քաշնակցական», հայկական, յեղափոխական եւայլն : Այս պահակախումբերուն պատկանող ամէն անձեր հրացանով զինուած են, զաշնակցականները ի միջի այլոց ուրիշ պաշտօն մըն ալ ունեցան, այն է պաշտպանել պարսկահպատակ իսլամները որոնք շուկան եւ ուրիշ վրտանգաւոր տեղեր գտնուելով կըրնային հայերէ թաթարներ կարծուելով սպաննուիլ, ինչ որ հաւատարմականապէս կրնար Պարսկաստանի մէջ հայերու դէմ վրէժնորդութիւն առաջ բերել : Բոլոր այդ պարսիկները կառավարողութիւն ընդ պահպանութեամբ չըջնարակիր մարդերէ պարս-

կական հիւպատոսարանը եւ իրենց հիւպատոսին կը յանձնուէին : Այս զանազան պահակախումբերէն զատ ժողովուրդին մէջ մեծ մասը զինուած էր :

Դեկտ. 9 ին հիւպատոսները խմբովին Պալատ գացին : Անոնք նկատել տուին փոխարքային թէ բոլոր Տփղիսի մէջ միայն օտարահպատակները զինուած չըլլալով անոնք ալ հրացաններ կը պահանջեն : Կոմս Վարանցով Տաշքով սկզբունքի քանի մը դիտողութիւն ընելէ յետոյ համաձայնեցաւ այս խնդրանքին եւ մէկէն հրաման տուաւ որ խնդրուած հրացանները տրուին, այսպէս, 40 հատ Գերմանիոյ հիւպատոսին, 40 Աւստրո-Հունգարիոյ հիւպատոսին, 30 Իտալիոյ հիւպատոսին եւ 25 միայն Գաղղիոյ հիւպատոսին (ըստ իւր խնդրանքի) : Տփղիսի ֆրանսական դաղձականութիւնը մասնաւոր դաստիարակուհիներէ եւ դերձակուհիներէ բաղկանալով, զէնք կրելու վիճակին մէջ եղող մարդոց թիւը սահմանափակ է : Խնդրոյ տակ եղող այդ հրացանները չեն յանձնուած տակաւին, եւ կը վախճուուի որ չը յանձնուին :

Այս որոշ խոստումները առանց արդիւնքի մնացին. քիչ յետոյ Տփղիսի պահակապաշտպան զօրաց սպաներուն կողմէ փոխարքային պատուիրակութիւն մը ներկայանալուն պատճառաւ : Այս սպաները յայտարարեցին թէ իրենց արժանապատուութիւնը վիրաւորուած կըլլար տեմնելով քաղաքին պաշտպանութիւնը պարզ քաղաքացիներու վստահուած : Անոնք կը վախճային որ սօսիալ-դէմօկրատները բանակին դէմ կը գործածեն իրենց տրուած զէնքերը. եւ ցոյց կուտային բոլոր վտանգը որ կրնար յառաջ գալ այս առաւել քան կասկածելի օժանդակներէն եթէ անոնց խնդրած 1200 հրացանն ալ յանձնուէր :

Հակառակ համեմատական հանդարտութեան որ երկու օր տեւեց եւ հակառակ այն ապահով յայտարարութեանց օր եղան կառավարչին պալատը, ուր ստուած թէ թաթարները քաղաքէն 12 քիլօմետր Ետ մղուած են, իմացուեցաւ որ անոնք Տփղիսի մերձակայ գիւղերը կը կողոպտէին. անոնցմէ 350 հոգի զինեալ քաղա-

քին մէջ կրկին ընդունուեցան իշխանութեանց հաւանութեամբը : Այդ բաւական եղաւ. փողոցներու մէջ նոր կռիւ մը բանալու համար որուն նախադրականները եղան զօրմաւորները, թաթարաց կողմէ (դեկտ. 10 ին) յանկարծական յարձակումներ կրելով ետ մղուեցան, գետնին վրայ ձգելով մեռելներ եւ վիրաւորներ : Հարկ եղաւ զօրքը հրախիւլ եւ ազգային պահակները հանգստեան կոչել : Այս առիթէն օգտուեցան կազմաւորուած համար բոլոր պաշտպանողական ընկերութիւնները : Ինչպէս յեղափոխական բոլոր ուրիշ խառնաշփոթութիւններու մէջ, կոնտինալոր բանակի ուժին վերելու մը կտրու վերահաստատուելու նշան տուաւ : Ալ ողբալու ոչինչ մնաց բացի ասիական թաղին մէջ հրդեհէ մը եւ շատ մը տուններու աւերումէն : Անկէ ի վեր է Տփղիսը խաղաղ է. Բայց որչափ ժամանակի համար :

ՓՈՒՆԴԱԿԱՆ ԶԵՆՈՒԹԻՐԻԸ ԶԱՐԻՆ

Կազմակերպ փոխարքայ Վարանցով Տաշքով կոմսը դեկտ. 17 ին ծածկագրութեամբ հետեւեալ հեռագիրը ըրկած է Զարին .

«Նոյեմբեր 31 ին, բոլորովին անակունեցի կերպով, կոտորածներ տեղի ունեցան Գանձակի Հայրիկին եւ թաթարներին միջեւ : Այդ սպանութիւններին վիճակն աւելի ծանրացաւ երկու ազգերէն ալ խուժիւրի երեւան գալովն որոնք չըջնալու աւանդները քաղաք եկան : Զօրավար Մարամ Գանձակ զրկուելով յաջողեցաւ զազրիցուելն սպանութիւնները եւ անկարգութիւնները :

«Գանձակի (Եղիսաբէթով) զէպլին տպաւորութեան տակ, պանական երկիւղ մը ծագեցաւ թիֆլիսի հայ մօզովուրդին մէջ որ զինուեցաւ իր պաշտպանութիւնը կազմակերպելու ձեռնարկեց, որին մասնակցեցան հայ յեղափոխական կուսակցութիւնը, զանազան կալուածատէրներ եւ վրացի յեղափոխական կուսակցութիւնը : Փողոցներին մէջ զինուած մարդիկ երեւցան որոնց թիւը մինչեւ 6,500 ի հասաւ : Զանոնք զինաթափ ընել անկարելի էր որովհետեւ ոստիկանու-

թիւը զօրմալու ըրած եւ զօրքերն ալ թաթարական հրոսախմբերէն դէմ քաղաքը պաշտպանելու յատկացուած էին : Դեկտ. 5 ի զիչերէն ի վեր հրացանաձգութիւն մը սկսաւ քաղաքին առկան մասին մէջ. Հայերն եւ թաթարներն միջեւ : Այս վերջինները մասնաւորապէս վնասուեցան : Այդ կացութեան պատճառով եւ հրամայեցի 500 հրացան բաժնիլ զօրմաւորական կուսակցութեան անդամներին որ առաջարկած էր կառավարութեան օգնել Հայերն եւ թաթարներին դէմ : Վերջին զէպլերն հաստատուեցին այդ որոշման ազդուութիւնը : Երկու օր շարունակ զազրեցաւ հրացանաձգութիւնը. բայց երրորդ օրը թաթարները յարձակեցան զինուած զօրմաւորներին վրայ որոնք պարտաւորուեցան յետ քաշուիլ, իրենց կողմէն մեռելներ եւ վիրաւորներ թողլով ասպարէզին վրայ : Գործաւորներին տեղն անցան զօրքերը : Հետեւեալ օրը հրդեհ մը ծագեցաւ ասիական թաղին մէջ. շատ մը տուններ քանդուեցան, զօրմաւորները զինուած լինելով, պաշտպանողական բոլոր կազմակերպութիւնները լուծուեցան : Բացուած հարցաքննութիւնը կապացուեցանք թէ Հայերը զրգոյիչ եղած են կոտորածին : Թիֆլիս համեմատապէս հանդարտ է այժմ : »

ԵԳԻՊՏՈՍԵՆ ՆԱՄԱԿ

Ասիոթ 19 դեկտ. 1905

Դարով մեզ, միակ մտածմունքս օրուան խորքով է այսինքն արաբական ապստամբութեան մը հաւանականութեանը որ օրօրուինք կոր վերջնիս :

Հարկաւ եզրպատահայ թիթերէն ցարդ իմացած էք որ Պոլսոյ զեպաններուն Մակեդոնոյ քօնթրոլի խնդրոյն նկատմամբ բռնած ազդու ընթացքը ու միջազգային միացեալ նաւաստամիջ կղզիները գտնուելը պատճառ եղաւ որ բոր . . . Սուլթանը իսլամական աշխարհի հաւա-

ՍՈՒԼԹԱՆԸ ՄՊԱՆԵԼՈՒ ՓՈՐՁԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ
(Արտատպուած «ԱՐՆԻՆԷԼ»-էն)

[Ծար. նախորդ թիւէն]

Ժօրիսի այս նախնական հարցաքննութեան վրայ, թէ՛ տունը, թէ՛ իր բնակած արարթըմանին եւ թէ՛ Րիբս ընտանիքներու բնակած եւ արարթըմանին կից գտնուող տան մը մէջ, ուր մինչեւ հիմա եղեռնական զէպլին օրը կը բնակէին նաեւ բաց ի Րիբս ամուսնուներէն, Ռուպինա Ֆային եւ իր հայրը : օրինական խուզարկութիւն կատարուեցաւ : Ժօրիսի բնակարանին մէջ կնքնաձորուածեան թէվօլէրէ մը ուրիշ բան չգտնուեցաւ : Իսկ արարթըմանին կից բնակարանէն գտնուեցան Լիբարիբսի եւ կնոջը Սօֆի Րիբսի յատուկ շատ մը այցաքարտեր, հինգ վց հատ գլխարկ : Այս տունը վեց ամսուան համար 20

ոսկի վարձուած էր, զոր կանխիկ վճարած էին : Վարձակալները 20 օրէ ի վեր հաստատուած էին հոն, եւ հակառակ իրենց օրոտածներ վրձարութիւն, օաց ի մէկ քանի հին ու մին աթոռներէ. երկու մահճակալէ եւ կարգ մօ ողորմելի կարասիներէ, ուրիշ ու եւ է առարկայ չէր տեսնուեր որ համեմատական ըլլար վարձակալներուն վճարութիւն : Զաշարանի յատկացուած սենեակին մէջ անգամ ճնննող պնակներ, աղտոտ զգայներ, պատառքաղներ կային, որոնք կապացուցանէին թէ զեռ չորս ճաշ մը տեղի ունեցած էր հոն :

Ասոնց ամենէն բացորոշ կերպով հասկցուած էր թէ՛ խուժարարական նպատակով մը վարձուած էր այս բնակարանը. որուն վարձեւորներն առ այժմեայ կերպով միայն հոն փոխադրուած էին : Լիբարիբս եւ ամուսնին Ռուսիցի ըսուած Ռուպինա Ֆային, եւ Սամուէլ Ֆային եւ Ժօրիս, հակառակ իրենց ուղղուած ազդարարութիւններուն՝ ճշմարտութեան խիստ հեռու պատասխաններ

կուտային. ասկէ դատ այս չորս անձանց նկատմամբ տեղի ունեցած քնննութիւններէն հասկցուած էր թէ ասոնք այլ եւ այլ տեղեր բնակած են Բերայի մէջ. օթէնեքու արձանագրութիւններն ալ կը հաստատէին ասոնց նկատմամբ տեղի ունեցած քնննութեան ճշգրտութիւնը :

Լիբարիբս մտածաւ Սօֆի Րիբս 1320 տարու սեպտ. ի կրք. օրը. Վիէննա Պոլքիշի ճարով Պոլիս գալով, Գրեօքըր օթէլը իջնանաւ եւ ամիս ետք այսինքն հոկտ. 2 ին, Թէփլի-Պաշի Ենձիւնձի փողոց Աւստրիացի Բիշարանտի իջնական 33 թիւ տունը փոխադրուած էին Մինչեւ 1321 տարու Մարտի 8րդ. օրը. հոն բընակելէ յետոյ, Վիէննա գացած է, եւ Մայիսի 27 րդ. օրը գող ձեռք Պոլքիշի ճարով Վիէննայէն գալով, Բերա Ռուսիայ օթէլը իջնելէ ետք, Յունիսի 1 ին, Հաճօրու խանին դէմ մտածաւ Անիա Սուլթանի 12 թիւ տունը փոխադրուած եւ անկէ 15 օր ետքն ալ Վոսփօր Թարապրա երթալու պատրուակով ելած, ձէջայիւր փողոց նախապէս յիշուած աւստրիա-

ցի Բատովիչի արարթըմանին կից գտնուող 1 թիւ տունը փոխադրուած եւ մինչեւ եղեռնական զէպլին հանգիւցած ուրբաթ օրը հոն բնակած էին :

Իսկ գալով Սամուէլ Ֆայինի եւ աղջկան Ռուպինա Ֆայինի, ասոնք ալ անցած տարու սեպտ. ի 18րդ. օրը. Վիէննայէն Պոլիս հասած եւ Գրեօքըր օթէլը իջած էին : Սեպտ. 27ին, ճարտարագիտ պատրուակով մեկնած էին օթէլէն եւ ձէջայիւր փողոց աւստրիացի Բատովիչի արարթըմանին կից գտնուող փաթիկ տունը փոխադրուած ատեն ասիկա ալ անոնց հետ մէկտեղ կը գտնուէր, եւ մինչեւ զէպլի օրը հոն բնակած էր :

Վերոյիշեալ օթէլները, արարթըմանները ու տուններն բնակող բազ-

նական գրգռման մը վրայ խօսի . արդ , այդ խօսքը ու քիչ մ'ալ իւր համարմանական գործակալներու միջոցաւ Երկրագործի խնամակալները գրգռելը գլխաւորաբար տեղական ազգայնական (հակահայկական) խնդիրներու խնամ խնամանքը գրգռելը—եւրոպական տէրութեանց Սուլթանը բռնի Մակեդոնիոյ քանթարիոյ յօժարեցնելուն առթիւ— տեղական ապստամբութեան մը եւ կամ աւելի ճիշդը ընդհանուր քրիստոնէից քարոզի մը խնդիր ելաւ , որ ստուգուելէ յետոյ բացէ ի բաց ալ սկսան զրուցել իսկ թէ Սուլթանէն մէկ լուրի կըստաւոր միտհամուտ ոտքի ելլալու համար ընդգէմ , քրիստոնէից հաւատքի պատերազմի . այս բոլորը Աղէքսանդրիոյ «Ազատ Բեմ» ին ու Գահիրէի «Առաւարներ»ին մէջ հարկաւ կարգացիք :

Արդ սիրելիս ահա այս խնդիրը հիմա բաւական սուր կերպարանք առած է հակառակ որ Սուլթանը խնդիրը գրեթէ կարգադրեց զնպաստներուն հետ : Գահիրէ ու զլիւսաւորաբար Աղէքսանդրիոյ գէպքեր պատահեցան . Աղէքսանդրիոյ վերջին գէպքին 15,000 հոգիներ խուժան մը ժողովեցաւ . ու փողոցի մը մէջ իսկ խուժանի մը ձեռքէ ձեռով քիչ մնաց մեռնէր մեր Աղէքսանդրիոյ Դանիէլ վարդապետն , զոր ոստիկաններ ազատած էին խուժանին ձեռքէն : Խնդիրը անգամ մը մարեալ կերպարանք առած էր հիմա նորէն արժարժութեամբ է վարի գէպքերուն հոս աշխատանք գտնելուն տոթիւ : Հոս քրիստոնէից տունները առաջուց մէջերնին բաժնիք են եղեր տաճիկները , հաւանական ջարդէ մը յետոյ բաժանման խնդիր մը չի յարուցանելու համար , ու այս բոլորը ինձ ըսելու համարձակութիւնը ունեցող մը գտնուեցաւ նոյն իսկ տան մէջ : Ահա տարի խնդիրը հոս տեղուանքն է , հիմա գէպքով կը պտտիմ կոր , հիւանդներու տուն իսկ երթալուս լէվոլէիս գրպանս է :

Աղէքսանդրիոյ անգլիական նաւատորմի մը եկածէ 7-8 զրահաւորէ բաղկացեալ եւ Գահիրէ Լօրտ Բրոմլը Խտիվին սպաննացած է ապստամբութեան մը պարագային բոլոր քրիստոնեաները մէկ կողմ ժողովել ու քաղաքը ռմբակոծել բերդէն որ անգլիական պահակազօրքին ձեռքը կը գտնուի ու բոլոր քաղաքին կիշխէ :

մաթիւ անձանց վկայութիւնն ու յայտարարութիւնները կատարելապէս համաձայն են դատախազին քննութեան այս արդիւնքին :

Յիշեալ անձերէն Լիբարթըս եւ Սիւլիօ Րիչի կարգ մը խոսվայոյզ նպատակներու կը հետապնդէին : Կառապան Մէնէսա աղայի վկայութեամբ մանաւանդ Լիբարթըս անգամ մը Բրէտի Լիօնէի Պանգան գացած էր . նկատելով որ Սիւլիօ Րիչի չընայութեանց եւ զանազան գործառնութեանց ապահովման համար եկած զրամները հասցէի մը կուգան տրուած որոշման համաձայն , Ա. տաքին գործող նախարարութեան եւ բարեկամ տէրութեանց զնայ մտնելուն միջոցաւ տեղեկութիւններ քաղուեցան զրամատուներէն : ասոնց մէջ տեսնուեցաւ թէ Բրէտի-Լիօնէի պանքային Սիւլիօ Րիչի եւ Լիբարթըսի անուան վճարուած գումարներուն ամբողջութիւնն է , 10 միլիոն միջոցին , 70 000 ֆր. եւ զէպքին շարժմը մը առաջ ալ Լիբարթըսի 10,000 ֆր. զրուած է . այս զրամները եկած

Պահակազօրքը հազիւ քանի մը հազար հոգի է ու նորէն աւելցնելու խնդիր կայ , առաջ չաա էր ու անցեալ տարի պակսեցուցին :

Աստուած մեղքնալով մեզ որ Ասիոյ մէջ մեծակոթեմէն ու ձանձրոյթէ չի նեղանալ , խնդիր մը հանեց որ . . . Գաղթին բնակչութիւնը 50,000 է որոնցմէ 300 հազար եւրոպացի են . հայեր , յոյներ ու քիչ մալ ֆրանսացի , իտալացի եւ անգլիացի : Խոսիներ կ'իլլան քանի մը հազար որք այլասերած մարդիկ են , վրանին յոյս չի գրուիր :

Ը ՏԻՐ ՄՏՔԵՐ

—Մարգոց գոհնիկը առանց գիտնալու կը գատէ :

—Համակրանքը կը մատնուի առանց խօսքի օղորմեան :

—Չկայ ձիւն կամ սառոյց որ արեւէն չը հալի :

—Վազելը օգուտ չունի , պէտք է ժամանակին ճամբայ ելլել :

—Առաջին սխալը իր ետեւէն ուրիշ սխալներ կը բերէ :

—Կնոջ մը յարգանքը յաճախ իւր սէրէն աւելի կարծէ :

—Մարդ մը երջանկացնելը երջանկութեան արժանանալ է :

—Ճակատագիրդ այն է ինչ որ կը նետ :

—Միշտ չարիք ենթադրողը կը խաբուի յաճախ :

—Հարստութիւնը երջանիկ չընէր :

—Աչքերը հոգիին վրայ բացուած պատուհաններ են :

—Էն ձիւն պատմութիւնները շատ անգամ էն տխուրներն են :



էին Աթէնքէ Ժընէվէ եւ Ֆիլիպպէ . Սիւլիօ Րիչիի անուան զրուած զրամներն ար 5000 ական ֆր. էն 10, հազար ֆր. էին , որուն 3500 ֆր. Ը Ֆիլիպպէ հաստատուած վաճառականներէն Ե. Ե. Ե. Ալաճաճեանի եւ Թաղաւոր Յակոբեանի կողմէ զրկուած էին : Հետեւաբար այդ անձերուն ինքնութեան եւ ընթացքին մասին քննութիւն կատարելու համար հրահանգ տրուեցաւ Պուլկարիոյ օսմ. գոմիսէրութեան , նոյնպէս Բրէտի Լիօնէի Պանքային մօտ մասնաւորապէս կատարուած քննութեան հետեւանքով հասկցուեցաւ թէ Լիբարթըսի կողմէ 740 օսկրի չափ գումար մը զրկուած է Բրէտի , Տիգրան Նալպանտեանի անուան : Այս Տիգրանի մասին ալ քննութիւն կատարելու եւ անմիջապէս զան ձեռքակալելու համար հրահանգ տրուեցաւ Այսքընի կուսակալութեան :

Ահա այս Րիբարթի եւ Սիւլիօ Րիչիի ապացոյցուած եւ խիստ ուշադրաւ այս արարքները եւ ընթացքները մէկիկ յիշատակութեան առնուեցան : Իր պաշ-

Ա ՉԳԱՅԻՆ

Գահիրէի Ալլա . Վարժարանի շինութիւնը յանձն առեր է իր ծախսով կատարել վսեմ Պօղոս փաշա Նուպարեան :

—Շուրջ ամիսէ մը ի վեր Կովկասի թերթերը մեզ չեն հասնիր . այս պատճառաւ օտար աղբիւրներէ կը ստանանք շատ անգամ Կովկասահայոց վերաբերեալ լուրեր :

—Վեհափառ Կաթողիկոսը անցեալ շաբթու Տիգրիս գացեր է եկեղեցական եւ դպրոցական կալուածներու վերադարձումի գործողութիւնները փութացնելու համար :

—Երկրպագի մէջ Վսեմ Պօղոս փաշայի նախաձեռնութեամբ «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» մը հիմնուելու վրայ լինելու առկէ առաջ հաղորդած էինք մեր ընթերցողաց , «Առաքելութիւն» վերջին թիւին մէջ կը կարդանք թէ շատ մը արհեստաւորներ եւ առեւտրականներ սրտի յօժարութեամբ փութացած են անդամակցելու , մուտքի տուրքէն ու ամսավճարի գումարէն զատ՝ Կովկասի հայերուն համար մասնաւոր նպաստներ ստորագրուած են : Առաջնորդ հայրն ալ եկեղեցւոյ բեմէն յորդոր կարգացած է որ ամեն հայ անդամակցի Հայ Բ. Ը. Միութեան , Առաջնորդարանի ժողովական պէյեր եւ էֆէնտիներ մեծ եռանդ ցոյց կուտան Միութեան անդամներու թիւը աւելցնելու համար :

—Տ Միւնաս Չերազը մենամարտի հրաւիրող տօք Մէլիքս վի մասին հետեւեալ տողերը գրուած են Բարիդէ «Առաքելութիւն» թիւին .

«Դաշնակցական» կուսակցութեան

տեսնվարած Սինկէր ընկերութեան մէջ , իրեն ստորագրած գտնուող Արեւալուքէօյցի Վոսապուլուս Բէնտիւրիան հետ ժօրիս բացառիկ յարաբերութիւն ունէր : Յետոյ Վոսապուլուս ընկերութեան մէջ իր պաշտօնը թողնելու Եւրոպա փախած է : Այս ճշմարտութիւնը ծածկելու համար ու եւ պատճառ եւ իմաստ չէ մնացած : Այս անձերը Պէշկիթաշի մօտ Վեհ . Սուլթանին անցնելիք տեղին վրայ տուն մը վարձել առաջարկած էին ժօրիս , որ ընդունելով առաջարկը , կնոջը հետ միասին տունը պտրեցած էր , ինչ որ իրեն առաջին հարցաշնորհութեան մէջ պարզուած էր : Ժօրիս եղեռնական գէպքին ուր բաժնի գրիւրը եւ առտուն , անոնց հետ միասին գտնուելը խոստովանած էր , իր իրեն կրկին ազգարարուցաւ ճշմարտութիւնը պարզարանել , յայտնեց թէ Վոսապուլուս հետ իրաւամբ բարեւոք յարաբերութեան մէջ էր , եւ որովհետեւ գիտէր , թէ ան ընկերվարական զաղափարներ ունէր , իր կայծիքով , Բարիդի մէջ պաշտօն մը

Եւրոպայի այս ներկայացուցիչը , մէկ երկու տարիէ ի վեր , իր երկու ուսանող բազմակներուն միջոցաւ , թէ Ս. Մերկայի Հայրենիքին եւ թէ Վոսայի Շարժումին մէջ Պ. Չերազը բարոյապէս մեղքնել ուղեղէ յետոյ , երբ կը տեսնէ թէ նա իր բարձրութեան վրայ կը մնայ դեռ եւ ինք կարեւորութիւն մը չի ստանար , բաւական համարելով անոր ԲԱՌԱՄԱՄԱՅԱՅ ազգային գործիչի բեղմնաւոր աշխատութիւնը , կուգէ անոր կեանքը վերցնել աշխարհէս անձնաւորութիւն վաստակելու փառաժողովութեամբ : Եւ իրաւունք ունի : Որովհետեւ Լա Հէյի Խաղաղութեան Վեհաժողովի ժամանակը սկսած է մօտենալ . եթէ Պ. Չերազ կենդանի մնայ՝ նորէն զայն պատգամաւոր պիտի ընտրեն . իսկ տօք . Մէլիքով բարձր օդին պիտի բանայ :

Տօքթորը յաղթանալով , ուժեղ եւ երեսնամեայ մէկն է . ֆրանսական հպատակ ըլլալու համար տարի մը զինուորութիւնը ըրած է Ֆրանսայի մէջ . մինչդեռ Պ. Չերազ 55 ամեայ , փափկակազմ անձնաւորութիւն մըն է , թող թէ անգլիական հպատակ ըլլալով ըստ օրինի արգելեալ է իրեն մենամարտի :

Մի քանի տասնակ երիտասարդներ , նկատելով որ Պ. Չերազ տակաւին շատ պէտք է մեր ազգին համար , փափաք յայտնեցին որ իրենցմէ մին իրեն փոխանորդ կարգուի :

—Կ. Պոլսոյ թերթերուն մէջ կը կարդանք թէ Պատրիարքարանը անցեալ երեքշաբթի օր արտօներ է պսակտէրութիւնը ամուսնացու զոյլի մը , որոնք շատ սերտ ազգակցական կապերով միացուած են : Այդ զոյգ ամուսնները քրոջ եւ եղբոր զաւակներ են եղեր :


Բայց թերթերը չեն ըսեր թէ այդ զոյգը ուր կը գտնուի : Կարծողներ կան թէ Վառնայի մէջ եղած ըլլայ :

Պ Ա Տ Ր Ա Ս Տ Գ Ո Ր Ծ Մ Ը

Միայն 500—600 ֆր. գրամազուրուով օրը 3 ֆր. շահ արտադրող պատրաստ գործ մը փնտոցող թող զիմէ խմբագրութեան :

գտնելու համար Պոլսէն մեկնած է Ժօրիս յայտնած է նաեւ թէ Րիբարթի անգամ մը Բրէտի Լիօնէի պանքան գացած էր , երբ յիշեալին կողմէ Բրէտի , Տիգրան Նալպանտեանի անուան քաղաքը փոխանակադրի մը հասցէն Պոլիս վերադարձնելու համար երաշխաւոր պահանջուած էր . Րիբարթի խնդրանքին վրայ ինք երաշխաւոր եղած է : Վոսապուլուս Պոլսէն հետեւալէն ետք Սօֆիա ալ գացած եւ հոն բնակած է , եւ Ժօրիս զրոյց մը լսած էր թէ պոսպա մը պայթելով յիշեալն ալ սպաննուած է : այս միջոցին իր կինը իր երկիրը երթալու համար համար Պոլսէն կը մեկնէր . ուստի յանձնարարաբեց անոր հանդիպել Ֆիլիպպէ . Վոսապի հետ թղթակցելու համար տրուած Անտոն Գոյի հասցէին գիմել եւ հաստատել թէ Վոսապուլուսի մահը ստօյգ էր :

(Շարունակելի)



ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Էրմէնիստան գըրկընլարընը թէշքիւ վէ թէրթիպ իտէնլէր-տէն վէ Համիտիյէ Գիւրտ սիւ-վարի ալալլարըն սէր գոմանտա-նը պուլընան իպրահիմ բաշա-նըն էօլմիւշ օլտըղընը պուլընտան էվվէլ թիւրք կազէթալարըն եազ-մըն ըտըլար իսէտէ, եալան ը-տը. զիւրա իպրահիմ բաշա էլ-եէվմ սաղ սէլիմ պուլընուպ մէ-մուրիյէթիւտէ տէվամ իթմէթ-տէ տիր: Ելչիլէր վէ պաշլընա ինկիլիզէլչիսի պու վահշի ճա-նալարըն մէսլէթիւտէն թարտ վէ էրմէնիստանտան իսրաճ ի-տիլմէսիւնի իտտաա իթմիշ օլ տըղլարընտան, թիւրք հիւքիւ-մէթի անը ալլա մէճպուր օլմա-մագ իչիւն մախսուս իպրահիմ բաշա էօլմիւշ տէշիւ կազէթա-լարա նէշը իթտիւրմիշ իմիշ, Շիմտի իչպու եալան մէյտանա չըգտը իսէտէ, էլչիլէրին նէ թա-րիգ թուլթաճաղը պիլիւնմէյօր:

—Թիւրքիայա կիրէճէք օլան էճնէպի մալլարա 100տէ 8 եէրի-նէ 11 կէօմրիւկ ալընմասը իչիւն Պապը Ալիին իտտաստընա էլան տէվլէթլէր գարըն կէլմէթտէ տիր լէր: Կէօմրիւկ իւղէրինէ պու 100 տէ 3 զամմտան սէնէտէ 700 պիւն լիրա ֆաղլա վարիտաթ հասըլ օլաճագ վէ անընլէ Մա-քէթիւնիւնին իւշ վիլայէթլէրի-նէ թախսիս օլընան 650,000 պիւտճէ գաբանճագ օլտըղը ի-չիւն, Պապը Ալի հէր հալտէ պու կէօմրիւկ զամմըն տէվլէթլէրէ գապուլ իթտիւրմէք իսթէյօր:

Ինկիլթէրա վէ Ֆրանսա քէն-աիլէրինէ պաղը իթիւղ վէ միւ-սատէլէրէ մուգապիլ ըաղի օ-լաճագլար կէօրիւնիյօր իսէտէ, բէք ետգըն կիւնտէ կէօմրիւկ մէսլէթիւնին հալլօլաճաղընա չօգ իւմիտ եօգ տըր:

—Ժօրիսին իտաւա մահքիւմ օլմասը Պէլճիգատա պէօլիւկ հէ-յէճան հասըլ իթմիշ տիր: Մէճ-լիսի աշանտա հիւքիւմէթտէն իզահաթ իսթէնիլտի: Մ. Ս. Ու-ւէնէր տէտի քի, Պէլճիգա հիւ-քիւմէթի Ժօրիսի իտաւտան գուրթարմագ վէ վաթանըն հու-գուգընը թանըթմագ իչիւն հէր պիր թէտպիրի էլէ ալմալը տըր:

Հիւքիւմէթ թարաֆրնտան Մ. Ֆապէրօ ճէվապ վէրտիքի՝ պու մէսլէ իչիւն մուխապէրաթ տէ-վամ իթմէթտէ տիր: Պէլճիգանըն հուգուգընը վըգալէսի իչիւն վիւքէլանըն սէպաթ ու զալրէ-թիւնէ Մէճլիսի Ալան էմին օլ-մալը տըր:

Գօնթ Կօպլէթ Մ. Ուէնէրին իտտաստընը թաստիլէ, մէսլէ-լէի Լահէնին սուլհ հէյէթիւնէ իհալէ օլընսըն տէտի, իսրիճիէ

նաղըրը պու թէրիլթէ ճէվապէն՝ «Թիւրքիա Լահէնին գօնթէրան-սընա իչիլթիւրաք իթմէմիշ տիր (?) տէտի:

—Ինկիլթէրա վէ ճաբօն պէյ-նիւտէքի ահտնամէտէ՝ Արապիս-տանտա վէ Անատոլուտա հալը հա-ղըրը (Սթաթու քիւօր) մուհաֆա-զա իթմէք իչ'ւն՝ եէնի պիր պէնտ իւլվէ իտիլմիշ օլմագ եա-լանը Ալմանիա կազէթալարը թէտարիք իթմիշ տիր վէ քիւլլիյէն էսասըղ ըմըն:

ԱՃԷՄԻՍՏԱՆ ՎԷ ԹԻԻՐՔԻԱ

Իչպու իքի հիւքիւմէթ պէյ-նիւտէքի արաղի մէսլէթի ա-ղըր պիր հալ քէսպ իթմէթտէ տիր: Մուսուլտա թէճէմիւսի մուգարբէր օլան թէֆթիշ գօ-միսիօնը թէճէմիւսի իթմէյէճէք տիր: Իչպու միւնալաշայա սէ-պէպ օլան աղ եէր տէկիլ տիր, 20,000 քաու քիւլմէթրօլըգ պիր արաղի տիր:

Թիւրքիա մէգքիւր արաղինին սահիպի քէնտիսի օլտըղընը ըս-պաթ իթմէք իչիւն՝ պուլընտան էվվէլ պիր գաշ տէֆա վէրկի թօրլամըն օլտըղընը պէյան ի-տէյօր: Սէճմիստան իսէ՝ Թիւր-քիւնըն հագսրլըրլա մէգքիւր վէրկիլէրի թօրլամըն օլտըղընը, վէ ինկիլիզ վէ Բուս տէվլէթլէ-րին վասիթասը իլէ էրլըրմ-տա ըմզալանան ահտնամէ ահ-քեամընճա մէգքիւր արաղինին Աճէմիստանա ալիտ պուլընտա-ղընը իտտաա էլլէմէթտէ տիր: Իչպու մէսլէթտէ Աճէմիստան հագլը պուլընտըղընը թաստիգ իթտիւրմէք իչիւն՝ ինկիլիզ վէ ըուս տէվլէթլէրինէ միւրաճաաթ իտէյօր:

Տ Ա Ի Ի Ի Է

Չիմկեանէ Գօնկիւնի

Մալիւմ օլտըղը իւղրէ պիր գաշ սէնէ մուգատտէմ Սահմա-նաղրուլթիւն ահքեամընճա Պուլ-կարիտ տախիլինտէ միւթէմէքին Չիմկեանէլէր տախի ինթիլտա-պաթ հուգուգընա հալիզ օլուպ ըէյ վէրմէթտէ իտիլէր: Փագաթ էյիի ֆէնտան թէֆրիգ իտէ-մէլէն վէ, ճընսլարը իլթիլա-սընտան քիմքի 3 զըշ վէրիւր իսէ անըն պօրուսընը չալան օլ-տըղլարը սէպէպլէ՝ Սօպրանիէնին գարարը իլէ ըէյ վէրմէք հոգ-զը անկէրտէն ալընմըն ըտը:

Շիմտի պիւթիւն Պուլկարիա-տա միւթէմէքին Չիմկեանէլէր թարաֆրնտան Սօֆիաաա պիր գօնկրէ թէճէմիւսի իթմիշ տիր: Գօնկրէնին ըէյիսի ալօգաթ Մարքով պիր նաթգ իրատը ի-լէ՝ Չիմկեանէ գալմընա թէքրար ինթիլապ հագզը վէրիլմէսիւնի եանի անըն հուգուգը սիյասիյէ-նին իստէսիւնի իտտաա իթմէք

իչիւն հիւքիւմէթ միւրաճաաթ իտէճէյիզ տէմիշ վէ պու մէպ-տէ իւղրէ գարարլար վէրիլմիշ տիր:

—Բուգար կիճէսիւտէն պէրու տէվամ իթմէթտէ օլան գար վէ սօվուգ ըուգլեարլէ չէհրիլիզ-տէ միւքէմէլ սուրէթտէ գըշ պաշլամըն տըր: Բաղար կիճէսի քէօյ եօլուտա 2-3 քիշի տօն-մուշ օլտըղը տույուլտը: Թիւն վէ էվվէլքի կիճէ տախի քէօշի-լէր եօլուտա վէ սօգագտա 3 քիշի տօնմուշլար տըր: Պու սօն-րա քիլէրտէ սէրիսլուգ էլամէ-թի հըսս օլընիյօր:

Բ Ո Ւ Ս Ի Ա

—Մօկուաաաա ալընան թէ լէկրաֆա պիւնէն, ըսեան պա-տըրըլմըն իչիլէր աւքէրլէրին գուրչուլարընա վէ թօր տար-պէլէրինէ տալանամալուպ մէ-թէրիսլէրաէն չէքիլմիշ տիրլէր-էվվէլքի կիւն 600 քիշի տէր-տէսթ օլընմըն 60 խանէ վէրա-նէ հալինի քէսպ իթմիշ վէ 7-8 պիւն քիշի թէլէթ օլմուշ տըր: Շիմտի չէհրին մէրքէլլէրի սիւ-քիւնէթտէ օլտըղը կիպի իչիլէր տախի իչիլէրինէ պաշլամըն տըր-լար:

—Վարչալաաա տախի աւքէր իլիթ իլալը թէսքիւն իթմէլէ մու-վաֆագ օլմուշ թէշլիգ ճիլէրտէն չօղլարը թէվլըթ իթմիշ տիր: Բօսթա վէ թէլէկրաֆ մէմուրլա-րը մէմուրիյէթլէրինի իլիթայա պաշլամըն տըրլար:

—Օտեաաաա Սլմանալա կի-տէն պիր վաբօրտա խալլը էր-մէնի վէ Եահուտի ֆիթարիլէր պուլընուպ տըշարը չըվմագ ի-չիւն ըէճա իթմիշ տիր իսէտէ, հիւ-քիւմէթ միւսատէ իթմէմիշ տիր: Վաբօր Եանանիստանա կիթմէք իչիւն Եօլա չըգմըն տըր:

Քէլա Բաքի գուլմանեաաընըն վաբօրլարընտան պիրի խալիա-տան 150 մուհաճիր Տրապիզոն իլիմանընա կէթիւրապ գարայա չըգարմագ իչիւն իւշ կիւն տա-խի պէքլէմիշ, ֆագաթ թիւրք հիւքիւմէթի մէղքիւր մուհա ճիլլէրտէն եալընը իսլալարը սէչուպ, 50 քիշի գագուլ իթ-միշ վէ տիլէրլէրինի ըտտ էյ-լէմիշ տիր: Բաքի գուլմանեաա Վաբօրըն նահագ եէրինէ զալպ իթտիլի 3 կիւն իչիւն թիւրք հիւքիւմէթիւտէն զարար զիյան տալա իտէճէք տիր:

ՄԻԻԹԷՆԷՎԻԻԷ

Ճաբօնիւնըն պաղը էյալէթ-լէրինտէ գըթըրգ հիւքիւմէթ-տէ օուպ, էհալիտէն չօղլարը բէք սէֆիլ հալտէ, 180,000 քի-

չի աճըղտան էօլմէք թէհլիքէ-սիւտէ իլիլլէր:

—Մարոք իսլահաթը իչիւն մուգարբէր օլան պէյնէտուի-վէլ գօնթէրանսըն Յուսւլար 7 տէ իլճէզիրաաաա թէճէմիւս օլընմա-սը գաթիլէն գարաիլիր օլմուշ տըր: Գօնթէրանստա ֆրանսըղ լիսանը իսթիմալ օլընտճագ տըր:

—Ինկիլթէրա եէնի վիւքէլա ընիսի՝ տէվլէթլէրին հարպ վա-բօրլարը արթըրմամալարը իչիւն պէյնէտուիլէլ պիր գօնթէրանս իթմէք թէքիլթիւտէ պուլընա-ճագ տըր: Թէքիլթիւտէի իլք տէֆա Ալմանալա կէօնտէրէճէք իմիշ:

ԾԱԽԻԻ ԳԻՐՔԵՐ

ԹԻՒՊՈՒՐՏ Մ. հատոր (162 էջ) 1 ֆր. Բ. » (433 էջ) 2 ֆր. ՆՈՐ ԵՐԳՈՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆՉ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԳ անգամ տպագ-րուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկար-նիւրա նիսա ու կացը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատու-թիւնն առաջ. Գին 50 օսնգիւմ

ՀԱՅԻՐԵՆԻՔԻ ՉՈՒՆԻ Պատկեր մը ճաճկահայաստանի իրական կեան-սէն: Չեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար գիւմել ՎԱՍԻՆԱ «Ի Ր Ա Ո Ն Ք» ի խմբագ-րութեան

ՍՕՅԻԱՍ Տ. Օննիկ Գարսեանի ՊՈՒԻՐԷՇ Տ. Օննիկ Փախաղեանի ԵՍ Տ. Յ. Պապէնճեանի ԿՕՆՍՏԱՆՑԻՆ Տ. Սիսակ Մէլիքեանի ԳԱՆԻՐԷ Տ. Կարապետ Էրզնկացեանի ԱՂԷՐՄԱՆԵՐԻՍ Տ. Ստեփան Մագ-մանեանի

ՈՒՍՏՐ (Ամերիկա) Տ. Յակոբ Յիւնիզ-եանի ՊՈՒԹՈՆ Տ. Ա. Ասքանաղի ՓՐՕՎԻՃԷՆՍ Տ. Մ. Տէր Պողոսեան

ԹԵՑ ԹԵՑ ԹԵՑ

Ընտիր եւ հոտաւէտ զուտ չինա-կան թէյ գործածել ու զոգ փափ-կաճաշակ յաճութորոցն թող զիմն Տ. Հրանտ Երկանեանի խանութը, Բրեսլավսքա փողոց թիւ 24, Հայ-կական Ընթերցարանին կից, հաս պի-տի գտնեն նաեւ ընտիր գօւլպաներ ֆաշէլաներ եւ այլն:

Չ Է Մ Է Ն

Գալիսէրի պատերմասը թերթիպի իլէ պատարմա հարանլարըն էր հալ-տէ չէմէլ իլթիլալարը օլաճաղընտան, իսլ իս վէ թագէ չէմէն ալմագ իսթէ-լէնլէր Վառնատա Տ. Յ. Ճանկիւլաա նա վէ Բուսճուգտա Տ. Ղուկաս Օղան-եանըն պագալ տիւքեանընա միւրա-ճաաթ իթմէլի տիրլէր:

Одоевникъ А. Курбетянъ печатаетъ а Д. Тодоровъ и С-ие—Варна